2013/8/1 azatutyun ardarutyun <azatutyun.ardarutyun@mail.ru>

Նախ որպես ՀՀ քաղաքացի ողջունում եմ Ձեր կազմակերպության աշխատակիցների և հատկապես կազմակերպության ղեկավար Արթուր Սաքունցի իրավապաշտպան և արդարության վերականգնմանն ուղղված գործունեությունն ու ցանկանում եմ Ձեր աշխատանքային կոլեկտիվին բեղմնավոր աշխատանք:

Խնդիրը, որը Ձեզ ցանկանում եմ ներկայացնել լուրջ և արմատական դրսևորում ունի:Հաշվի առնելով այն, որ Ձեր կազմակերպությունը կարող է անաչառ և արդարացի լուծումներ գտնել մի շարք անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար, ինչպես նաև առավել հնարավոր գործնական բարդություններից խուսափելու նպատակով / հուսով եմ հասկանում եք / հիշյալ նամակս ես ուղղում եմ Ձեզ՝ չցանկանալով ներկայացնել իմ անձի ինքնությունը / խնդրում եմ նաև չտարածել իմ այս հաղորդագրությունը՝իմ անձի գաղտնիության նկատառումներով /: Այսպես՝ ինչպես տեղյակ եք Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժնում, որը նոր է ձևավորվել, շուրջ 1 ամիս է շատ " արագընթաց " տեմպերով կատարվում եմ լայնածավալ շինարարական աշխատանքներ, որը ըստ պլանի պետք է ավարտվի սույն թվականի սեպտեմբեր ամսին՝ ՀՀ ոստիկանապետի " բացման" արարողությամբ: Ըստ շրջանառվող լուրերի այդ շինարարության համար պետական միջոցներից հատկացվել են համապատասխան գումարներ / շուրջ 20.000.000 դրամ /, սակայն " կոմունիստական գաղափարախոսությամբ " դեռևս աշխատող որոշ հդբացած ղեկավար անձանց բանավոր հորդորներով ու պահանջներով ոստիկանության Բազումի բաժնի ստորադաս աշխատողները հայտնվել են ֆինանսական դժվար կացության մեջ, այն է՝ ոստիկանության ծառայողները պարտադրված, իրենց անձնական միջոցներով կամ տարբեր անձանց խնդրելով, ոմանք կանխիկ, ոմանք պարտքով / հետագայում վերադարձնելու պայմանով / գնում են իրենց աշխատանքային սենյակների եվրոլուսամուտները և դեռևս շինարարական աշխատանքները չավարտված՝ յուրաքանչյուր անձից պահանջ է ներկայացվել որպես աշխատասենյակի նորոգման գումար վճարել 100 դոլլար: Բոլորս բաջատեղյակ ենք, թե իրենց կատարած աշխատանքի դիմաց որքան են վարձատրվում ոստիկանության աշխատողները, ոմանք ինչ դժվարին սոցիալական պայմաններում են ապրում և վերոհիշյալ իրողությունը ներկայումս մեծ դժգոհության և նաև որոշ մարդկանց մոտ ոստիկանության համակարգից հեռանալու ցանկություն է առաջացրել, սակայն իրողությունն այնպիսին է, որ համակարգային լուրջ բարդույթ է ձևավորված ոստիկանության համակարգում և շատերը համարում են ճիշտ լռել անարդարության դեմ / պարտքով փող կամ բանկից վարկ վերցնել, կամ սեփական միջոցները տրամադրել այդ շինարարության համար, միայն թե աշխատանքից չզրկվել կամ խնդիրներ չունենալ վերադասի հետ /: Ես հուսով եմ, որ շատ շատերը ճիշտ կհասկանան ինձ և Դուք ներկայացված ճշմարտությունը կարող եք իրազեկել ոստիկանության բարձրագույն մարմիններին, մասնավորապես՝ ոստիկանապետին, որպեսզի վերականգնվի սոցիալական, իրավական արդարությունը և ոստիկանության աշխատողները կարողանան " ազատ շունչ քաշել ": Կանխավ շնորհակալություն: